ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/82

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Գիպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գիպար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14» ծածկագրով բաց մրցույթ, սննդի պատրաստման և մատուցման ծառայության ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2999-2022 գրությամբ «Գիպար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի 09.02.2022թ.-ի թիվ 15-22 գրության հիման վրա, 21.02.2022թ.-ին «Գիպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.02.2022թ.-ին:

21.02.2022թ.-ին www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/82 համարի ծածկագիրը:

03.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

2. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.02.2022թ.-ի թիվ 15-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից կազմակերպված ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գիպար» ՍՊԸ-ի և «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2022թ.-ի հունվարի 5-ին կնքվել է N ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ- 21/14-1 գնման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմում է 3750 (երեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Հետագայում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 10.01.2022թ.-ին «Գիպար» ՍՊԸ-ին ծանուցվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և համաձայնագրի

նախագիծ՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և ներկայացնել Պատվիրատուին: Միաժամանակ տեղեկացվել է, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում «Գիպար» ՍՊԸ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն կլուծվի՝ համաձայն Պայմանագրի 7.15 կետով սահմանված պահանջների:

Հայտնում ենք նաև, որ «Գիպար» ՍՊԸ-ի կողմից 27.01.2022թ.-ին ներկայացվել է N 2022/01-03 գրությունը, հետևյալ բովանդակությամբ՝ «Տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր ընկերությունը ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1 ծածկագրով պայմանագրի կնքման փուլում տեղեկացել է, որ մեր կողմց ներկայացված 3750 դրամի արժեքը համարվում է պայմանագրի ընդհանուր գումարը:

Հայտնում ենք Ձեզ, որ մեր ընկերության կողմից տրամադրված գինը ներառում է 1 մարդ օրվա համար (նախաճաշ, ճաշ և ընթրիք), ուստի 375.0 դրամ ընդհանուր պայմանագրի գումարի չափով անհնարին է դառնում 365 օրվա համար կատարել նշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը: Այդ իսկ պատճառով հրաժարվում ենք վերը նշված պայմանագրի կատարումից»:

«Գիպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պատճառները չհամարելով հիմնավոր և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները՝ «Գիպար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում Ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ դիտարկելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գիպար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գիպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Գիպար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2999-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 03.03.2022թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

««Գիպար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/82 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Ֆինանսական միջոցներ հասպատվելուն պես, այն է՝ 10.01.2022թ «Գիպար» ՍՊԸ-ին է ներկայացվել պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի նախագիծը.

Արդեն համաձայն 31.01.2022թ «Գիպար» ՍՊԸ-ին ուղղված գրության համաձայն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից՝ 05.01.2022թ. կնքված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է, հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Գիպար» ՍՊԸ-ն 27.01.2022թ: ներկայացված գրությամբ հրաժարվել է պայմանագրից.

Այնուհետև, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավա¬րության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Գիպար» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշել ենք՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիր:

Ֆինանսական միջոցներ հասպատվելուն պես, այն է՝ 10.01.2022թ «Գիպար» ՍՊԸ-ին է ներկայացվել պայմանագրին կից կնքվելիք համաձայնագրի նախագիծը.

Արդեն համաձայն 31.01.2022թ «Գիպար» ՍՊԸ-ին ուղղված գրության համաձայն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից՝ 05.01.2022թ. կնքված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է, հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Գիպար» ՍՊԸ-ն 27.01.2022թ: ներկայացված գրությամբ հրաժարվել է պայմանագրից.

Գտնումենք, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը միակողմանի լուծելով՝ 05.01.2022թ. կնքված թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ՝հետևյալ հիմնավորմամբ.

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից խախտվել է Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը: Մասնավորապես, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 2022թ. հունվարի 05-ին կնքված «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով պայմանագիրը «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից միակողմանի լուծվել է 31.01.2022թ. և 01.02.2022թ. այդ մասին հրապարակվել է www.gnumner.amպաշտոնական տեղեկագրում, սակայն համապատասխան հիմքերն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն միայն 09.02.2022թ.:

Այսպիսով, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը պետք է համապատասխան հիմքերն ուղարկեր լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ մինչև 08.02.2022թ. ներառյալ, սակայն, ինչպես արդեն նշել ենք, հիմքերը ներկայացվել են վերջնաժամկետը լրանալուց հետո միայն 5 օր անց, այնէ՝ 09.02.2022թ.:

Արդյունքում՝ Պատվիրատուն խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, որը սահմանում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում

նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Այսպիսով, քանի որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Գիպար» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ մի շարք ընթացակարգեր:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գիպար» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած

որևէ պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/82 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ.-ին կնքվել է թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» ծածկագրով սննդի պատրաստման և մատուցման ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունը մինչև 30.12.2022թ., իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունը և վարձատրել դրա համար:

iii. Պատվիրատուն 10.01.2022թ.-ին «Գիպար» ՍՊԸ-ին ծանուցել է թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» գնման պայմանագրին կից համաձայնագիր կնքելու առաջարկը և համաձայնագրի նախագիծը:

iv. «Գիպար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել համաձայնագիրը և 27.01.2022թ.-ի ներկայացված թիվ 2022/01-03 գրությամբ հրաժարվել է պայմանագիրը կատարելուց:

v. www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.02.2022թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի հունվարի 5-ին կնքվել է ծառայության մատուցման թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» պետական գնման պարյմանագիրը՝ 3 750 (երեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարով: «Գիպար» ՍՊԸ-ին ծանուցվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և համաձայնագրի նախագիծ՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և ներկայացնել Պատվիրատուին: Միաժամանակ տեղեկացվել է նաև, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում «Գիպար» ՍՊԸ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից

միակողմանի կլուծվի՝ համաձայն Պայմանագրի 7.15 կետով սահմանված պահանջների: «Գիպար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել համաձայնագիրը և 27.01.2022թ.-ի ներկայացված թիվ 2022/01-03 գրությամբ հրաժարվել է պայմանագիրը կատարելուց:

vi. Հիմք ընդունելով պայմանագրի 7.15 կետը՝ պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվում է:

vii. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 09.02.2022թ.-ի թիվ 15-22 համարով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2999-2022 գրությամբ «Գիպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և «Գիպար» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի հունվարի 5-ին կնքվել է ծառայության մատուցման թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-21/14-1» պետական գնման պարյմանագիր: «Գիպար» ՍՊԸ-ին ծանուցվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և համաձայնագրի նախագիծ՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և ներկայացնել Պատվիրատուին: Միաժամանակ տեղեկացվել է նաև, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում «Գիպար» ՍՊԸ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի կլուծվի' համաձայն Պայմանագրի 7.15 կետով սահմանված պահանջների: «Գիպար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել համաձայնագիրը և 27.01.2022թ.-ի ներկայացված թիվ 2022/01-03 գրությամբ հրաժարվել է պայմանագիրը կատարելուց: Հիմք ընդունելով պայմանագրի 7.15 կետը՝ պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվում է:

www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.02.2022թ.-ին հրապարակվել է պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով ուղարկվել է 09.02.2022թ.-ի թիվ 15-22 համարով՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 01.02.2022թ.-ին՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով, սակայն «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է փոստային առաքման միջոցով ուղարկվել 09.02.2022թ.-ի թիվ 15-22 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի

դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2999-2022 գրությամբ «Գիպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/82 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**